

64
L-62



Mr. M. Nersesyan
24 SEP 2010
Հայաստանի Հանրապետություն
Հայաստան

ԳԱՂՏՆԻՔ
ԱՐՈՒԵՍՏԻՑ - ՖՈՐՄԻՒԼԱՆԵՐ



Հրատարակիչ
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳՐԱՏՈՒՆ

ՆԻԽ ԵՕՐՔ

1914

69

1-62

Մատենագիտական Յանձնախումբ

Հ. Բ. Ա. Մ., - Հալեպ Փոստարկղ 348

Նույնականությունը մրկ. ջայր գրիգորիան

62
լոր

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Այս գրքոյկիս մէջ նշանակուած արհեստներու գաղտնիքը կամ Փօրմիւլաները ընտրանօք քաղած ենք, թարգմանաբար թերթերէ և վստահելի աղբիւրներէ:

Ցաջողելու համար խիստ կարեւոր է ընտիր եւ հարազատ նիւթեր գործածել: Դիւրութիւն ընծայելու համար, բաղկացուցիչ նիւթերը եւ չափերը Անգլիերէն ուղագըրութիւնով ալ նշանակած ենք:

Անհամար են այն պարզ փոշիները եւ հեղուկները զորս կը ներարկուին օտար երկրէ ի Հայրենիք, մինչդեռ ատոնք կարելի էր տեղին վրայ պատրաստել:

Մեր վարձատրութիւնը լիուլի ստացած կ'ըլլանք երբ տեսնենք որ Հայ արհեստաւորը այս գրքոյկէն օգուտ մը կը քաղէ:

Նէ-Եօբ+

1914

Բ. Տ. ԸՆԹԱՊԱՊԵԱՆ

ՍԵՎՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԵՐՍԽՆ ՎՃ. ԹԱՐԱՊԵԱՆ
ՖՐԵԶՆ, ՄԱԼՎԱՐՈՒՄ



68809-68

ԳԱՆՏԻՔ

ԱՐՈՒԵՍՏԻՑ - ՊՈՐՄԻԿԱՆԱՐ

1. ԹՂԲԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԱՌԵՒՏՈՒՐ —
Մեծ ապագայ կայ թղթակցութեամբ առե-
տուրի զանազան ճիշդերուն մէջ, թէպէտեւ
ձախողութիւնք ալ անպակաս են. Խարեբայ
ձեռնարկներ ժամանակ մը թերեւս ծաղկին,
սակայն ուշ կամ կանուխ կը փանանա:

Թղթակցական կարեւոր վաճառատուն մը
կրնայ հաստատուիլ, երկար և անխոնջ ջան-
քերու չնորհիւ, պարկեշտ և ուղղամիտ յա-
րաբերութիւնով։ Թղթակցական առեւտուրի
ասպարէզը թէպէտեւ անսահման է եւ կը
խոստանայ բազմաթիւ պատեհութիւններ,
ձեռներէց եւ գործունեայ արանց ու կանանց,
դրամ շահելու համար, պատուաւոր միջոց-
ներով, կը պահանջուի նոյն առթիւ համբե-
րութիւն եւ յարատեւութիւն։ Շատ առար-
կաներ կան օրոնք կարելի է տան մէջ պատ-
րաստել եւ մեծ շահով վաճառել աչքառու
ծանուցումներու միջոցով։ Այս գրքին մէջ
յիշած ենք շատ մը օրինակներ, դեղեր, տան
պիտոյք, նորութիւնք եւայն։ Հեղուկի պատ-
րաստութիւններ գգուշութիւնով փաթթելու
և եւոքեւով ուղարկելու է, իսկ վաճառումը,

թերթերու մէջ ծանուցանելով կ'ըլլայ, նաեւ փոսթով խրկուած շրջաբերականներու միջուցով։ Շատ առարկաներ կան որ կրնան ծախուիլ գործակալներու ձեռամբ, և եթէ կըրնաս կարգադրել ամէն ինչ յարմարութեամբ, բազդդ շինուած է։ Թղթակցութեամբ առեւտուր ընելու մէջ գլխաւոր յաջողութիւնը կախում ունի այն թերթերէն որոնց մէջ կը ծանուցանես. թերթ մը կրնայ կարգ մը ապրանքի համար յարմար ըլլալ իսկ ուրիշի մը համար անյարմար։ Դրամագլուխը կորոշուի ծախուած ապրանքին համեմատութեամբ, իսկ շահէ կ'որոշուի ապրանքը ծախելու կարողութենէր։

2. ՀՈՒԱՆԿԱՐ ԳՈՒՆԱՀՈՐԵԼ — Հուսանկար կամ տպագրեալ պատկերներ գունաւորելու գործը ինքնին ամեն տեղի համար դրամ շահէլու լաւ միջոց մըն է. շատ գիւրութեամբ կարելի է սովորիլ։ Գործ մըն է որ կը յարմարի թէ կանանց եւ թէ արանց, և կրնայ տարբեր գործերու հետ իսկ շարունակուիլ։

Գործածէ թափանցիկ ջրաներկեր զորս կրնաս գնել ուեւէ տեղ արուեստից յատուկ, ապրանք ծախողներէ։ Եթէ պատկերը փայլուն կամ յղկեալ մակերեսով է, լորցունքով թրջէ, չի յղկուած լուսանկարներ կամ տպագրեալ պատկերներ թրջելու հարկ չկայ։

Եթէ տպագրուած պատկեր մըն է որ պիտի ներկես, նախ խաւաքարտի վրայ փակցուր զայն, եւ գունաւորելու համար ջրաներկին հետ խէժի լուծում (կըմ արապիք) գործածէ, արգիլելու համար թուղթին մէջ թափանցելէ։ Եթէ ներկը չառնէ թուղթին կամ լուսանկարին վրայ, կամ եթէ ծրէ, ներկերուն հետ գործածէ քիչ մը Ասէթիք թթու (acetic acid)։

Ենթագրենք որ գեղեցիկ լուսանկար մը ունիս գունաւորելու, սկսէ նախ ներկել յատակը (back ground), վրձինը ներկով թաթիչէ, եւ հաւասարաբար տարրածէ, զգուշանալով որ դէմքին չի քսես։ Եթէ պատկերին յատակը բաց գոյն է, գործածէ բաց կապոյտ. Եթէ գոց թուխ գոյն զարկ Յաճախ պատկերին յատակը չը ներկել լաւ է. վասն զի այդպէսով դէմքը աւելի ցցուն կ'երեւնայ։ Դէմքին համար գործածէ մարմնագոյն յստակ ջրախառն ներկ, կարելի եղածին չափ առատ ջուրով եւ ըստ պատշաճի մէկ կամ երկու անգամ գոյն տուր։ Այտերուն եւ մազերուն գոց գոյն զարկ յօնքերուն վրայ դիր թուխ գոյն, թեթեւ դեղին գոյն զարկ շրթներուն եզերքը։ Յետոյ նուրբ վրձինով աշքը ներկէ։ Ապա գունաւորէ մազերը եւ գործածէ այն գոյները որ հարկ է։ Վրձինը մազերու ուղղութեան համեմատ քսէ։ Յետոյ ներկէ զգեստները կապոյտ, բաց կանանչ, կամ կարմիր, եւ կամ դեղին գոյն

ներով։ Ընդհանուր գոյնը տալէ վերջ շուքերը գոյ գոյնով ներկէ։

Յաջողութեան դլամաւոր գաղտնիքը կը կայանայ կացմբել եղածին չափ ջրախռովն գոյն գործածկուն մէջ։ Միշտ բաց գոյն զարկ եւ չորնալէ վերջ կրկին նոյն թօնով ներկէ աւելի գոյ գոյն տալու համար։

3. ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ԱՊԱԿԻԻ ՎՐԱՅ ՓՈԽԱՆՑԵԼ — Լուսանկարները պակիի վրայ կրնան փոխանցուիլ հետեւեալ կերպով։ Հանէ լուսանկարուած թուղթը խաւաքարտի վրայէն չոգիով կամ ջուրը ձգելով և չորցուր աղէկ մը, եւ տաք պակիին պալսըմով կամ բացասական ջրեղով (Վերնէն) ծածկելէ ետք լուսանկարուած թուղթը ատոր վրայ դիր, աղէկ մը ողորկէ, եւ թող որ զով տեղ մը մնայ մինչեւ որ չորնայ։ Յետոյ ջուր դիր, եւ ձըդամիէժ ռէտինով մը չփէ թուղթը խնամոտ կերպով այնպէս որ լուսանկարը զետեղուած պակիին վրայ մնայ։

4. ՄԵՏԱՔՍ ԹԱՇԿԻՆԱԿԻ ՎՐԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐԵԼ — Մետաքսը զգուշութիւնով նախապէս լուսալու է, վրայի (+օլան) Օսլան հանելու համար։ Եւ յետոյ, հետեւեալ բաղդրութեան մէջ թաթիւէ, Սօսիթմ Գլօրայտ (Sodium Chloride) 4 մաս, Արարօթ (Arrow root) 4 մաս, Քացախի թթու (Acetic

acid) 15 մաս, Թորեալ (distilled) ջուր 100 մաս։ Նախապէս արարօթը ջուրին մէջ լուծէ, աստիճանաբար տաքցնելով, եւ յետոյ միւս նիւթերը վրան աւելցուր։

Յետոյ 4 մաս բնակաղնի (tannin) 100 մաս զտեալ ջուրի հետ լուծէ եւ վերի բաղդրութեան հետ խառնէ։

Մետաքսը այս բաղադրութեան մէջ իբր 3 վայրկեան թող եւ առանց քամելու ծայրերէն կախէ զայն եւ թող որ կատարեալ չորնայ։ Յետոյ պատրաստէ զգայնացնող խառնուրդը սա կերպ։ Արծաթի Նայթրէթ (Silver nitrate) 90 մաս, Զտեալ ջուր (distilled water) 750 մաս Նայթրիկ թթու (Nitric acid) 1 մաս, և լաւ մը լուծէ։

Թաշկինակը այս բաղադրութեան վրայ տարածելու է այնպէս մը որ մէկ երեսէն թրջի, 1 վայրկեան սպասելէ վերջ, թող որ կէս մը չորնայ. կիսաչոր վիճակի մէջ, թաշկինակը հարթ տախտակի մը վրայ տարածէ որ կատարեալ մը չորնալով հաւասար մակերես մը ստանայ։ Այս վերջի գործողութիւնը գիշերը կազի կամ ելեքտրական լոյսով ընելու է, արեւի լոյսը կ'աւրէ և կը սկցնէ։

Յետոյ մետաքսին դեղով զգայացունց երեսը լուսանկարի պակիին վրայ դնելով, սովորական թուղթի վրայ լուսանկար տպելու եղանակով արևի լոյսով տպելու է, եւ

Հաստատելու է (fixing), այլեւս բնական լոյսի ազդեցութեամբ լուսանկարը չի աւըրռելու կամ սեւնալու համար, տպելէ վերջ հաստատելու է։ Հաստատելու եղանակ. (fixing bath), (fixing) հետեւեալ բաղադրութեան մէջ 5-10 վայրկեան թող, թորեալ ջուր 20 մաս. Հյոր 1 մաս։

Հաստատելէ վերջ, թաշկինակը պարզ ջուրի մէջ կէս ժամ թողելու է, և ապա չորցնելու եւ արդուկելու է։ Այս կերպ պատրաստուած լուսանկարը բնաւ չաւրուիր.

Վերոյիշեալ բաղադրութիւնը պատրաստ կը ծախուի նաեւ գեղարանները, կամ լուսանկարի վերաբերեալ իրեղէններ ծախող վաճառատուներ։

5. ԱՐԻԻՆ ՄԱՔՐԵԼ — Խտացեալ խատուքի հեղուկ (fluid extract Buldock) 1 առւնս, Սարսափարիլի խտացեալ հեղուկ (fluid extract of Sarsaparilla) 1 առւնս, Դեղին կռատուկ հեղուկ (fluid extract yellow Dock), 1 առւնս. Խտացեալ հեղուկ Սէնէ (fluid extract Senna) 1 առւնս. Օշարակ (Syrup) 1 առւնս. Ալքօհոլ 2 առւնս, իրար խառնէ բուրրը։

6. ԳԻՆԵՄՈԼՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆ — Արջասպ (Sulphate of iron) 5 կրէյն (grain), Մակնեղիս (Magnesia) 10 կրէյն (grain), Փլրիբրջուր (perperment water) 11 տրամ

(dram), Հընդկընկուզի ոգի (spirit of nutmeg) 1 տրամ (dram)։

Այս բաղադրութիւնը միեւնոյն ատեն կը ծառայէ իբրեւ կազդուրիչ (tonic) որով ոգելից ըմպելեաց տեղը կը լրացնէ մասամբ, եւ կ'արգիլէ մուային եւ Փիզիքական ուժաթափութիւնը որ սովորաբար խմելը մէկէն դադրեցուելուն կը յաջորդէ։ Նախ կտոր մը շաքարի վրայ 12 կաթիլ կաթեցուր օրական երկու անգամ գործածէ, հեզզետէ աւելցուր շաքը մինչեւ ամէն մէկ անգամին 1 թէյի դգալ քանակութիւնով։

7. ԳԼԽԱՑԱԻԻ ԴԱՐՄԱՆ — Խառնէ 2 թէյի դգալ նուրբ կերպով փոշիացած ածուխ (charcoal) կէս գաւաթ ջուրի մէջ եւ խմէ։

Այս անմիջական դարման մըն է, եթէ գլխացաւը, ստամոքսին մէջ չափէն աւելի թթու գոյանալէն պատճառած է, ինչ որ սովորական պատճառ մըն է։

8. ԿՏՐԱՄԻ ԴԵՂ — Ճարպ (Lard) 4 (oz.) առւնս. Մեղրամոմ (Beeswax) 4 (oz.) առւնս. Բէզինա (resin) 2 (oz.) առւնս. Քարպալիք թթու (carbalic acid) մէկ քառորդ (oz.) առւնս. Առաջին երեքը իրար խառնէ եւ տաքութեամբ հալեցուր. վրան աւելցուր Քարպալիք թթուն խառնէ մինչեւ որ պաղի։

9. ՊՆԴՈՒԹԵԱՆ, Եւ ԱՆՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ
ԴԱՐՄԱՆ — Հասարակ ածուխ (charcoal)
լաւ կը յանձնաբարուի պնդութեան համար:
Ածուխը լաւ մը փոշիացուը եւ խառնէ
(molasses) քաղցր օշաբակի հետ:

Պէտք է մէկ ապուրի գգալ առնել 2-3
անգամ օրական. ամէն կերակուրի վրայէն:

10. ԱԲԱԿ ՑԱԽԻ ԱԿԲԱՆ, ԴՈՒՐՍ ՔԱ-
ՅԵԼ — Թինքչըր ակ էքօնայթ (tincture of
aconite), ԳլորօՓօրմ եւ ալքոհոլ, իւրաքան-
չիւրէն մէկ առւնս: Երկու կտոր կերպաս
թրջէ այդ հեղուկով եւ հանուելիք ակույժ
լինդերուն երկու երկու կողմը քո՞է 5 կամ 10
վայրկեան շարունակ: Յետոյ երբ ակուան
դուրս քաշես ցաւ մը շես զգար:

11. ԱԲԻՒՆ ՇԱՏՑՆՈՂ և ԿՈԶԴՈՒՐՈՂ —
իրար խառնէ Սլլֆէյթ մանկանեղ (Sulphate
of manganese) կէս առւնս, ջուր 1 փայնթ
(pint), օրական երեք անգամ կերակուրէ
10 վայրկեան առաջ գործածէ, մէկ թէյի
գգալ մէկ գաւաթ գինիի մէջ խառնելով:

12. ԱԿԲԱՑԻ ՑԱԽԻ — Ամենասաստիկ ակ-
ույժի ցաւը կրնայ դարմանուիլ Ամօնիայի
(ammonia) մէջ թաթխուած լաթ մը ցա-
ւող ակույժին վրայ դնելով:

13. ԱԿԲԱՑԻ ՓՈՇԻ — Պատրաստ կաւիճ
(prepared chalk) 7 առւնս, ձերմակ շաքարի
փոշի (powdered white sugar) կէս առւնս,
Օրիս արմատի փոշի (powdered orris root) 2
առւնս, Զկնոսկը փոշի (powdered cuttle fish
bone) կէս առւնս, Գլորէյթ փոթաս փոշի
(powdered chlorate of potash) կէս առւնս,
Փումիս փոշի (powdered pumice stone) կէս
առւնս, Քէսըլ օճառ փոշի (powdered castle
soap) կէս առւնս:

Բոլորը լաւ մը իրար խառնէ, անուշահո-
տութեան համար աւելցուը 5 կաթիլ ջուրա-
նուխ (peppermint oil) իւզ, մէկ կաթիլ վարդի
իւզ (oil of Rose Geranium) և կամ ուրիշ ունէ
անուշաբոյր իւզ:

14. ԲՈՄԱԹԻՉԱՄԻ ԴԵՂ — Հետեւեալը
գեղագրի մը ընդօրինակութիւնն է զոր կը
նշանակենք: Salicylate of soda մէկ ու կէս dram,
Iodide of Potash 95 grains, Wine of Colchicum
7 drams, Elixir Lactopeptine, enough to make 4
ounces. Mix. Ամէն ճաշէ վերջ թէյի գգալ մը
գործածէ:

15. ՄՈՐԹ ԿԵՌԱԼՈՒ ԴԵՂ — իրարու
հետ լաւ մը խառնէ, 2-3 լեմոնի ջուրը (Lem-
on Juice) հաւասար քանակութիւնով (oil of
Rose) եւ մարմինի կեռացած մասերուն վրայ
քսէ: Մի քանի անգամ գործածութեամբ
կը բուժուի:

16. ՈՑԻՑ ԿՈՇՑԻ (ՆԱՍԸԲԻ) ԴԱՐՄԱՆ (corn) — Եթէ ամենէն զօրաւոր քացխական թըռթու (acetic acid) առաւօտ եւ երեկոյ ուղարի մազէ շինուած խոզանակով մը քսես նասըրին վրայ, մի քանի օրուան մէջ նասըրը պիտի անհետանայ: Ուրիշ դարման մըն ալ է դեռ նոր եռացուած փաթաթէսի կեղեւը: Կեղեւին ներսի կողմը նասըրին վրայ դիր 12 ժամ:

17. ԹՈՒԻԹՔԻ (ՄԱՑԱՍԼԻ) ԴԱՐՄԱՆ — Սէնա քաղցրաւէնի (confection of Senna) 2 (oz.) առւնս, Թրիմ թարթար (cream tartar) 1 (oz.) առւնս, Սլիֆուր (sulphur) 1 (oz.) առւնս, Զէնձէֆիլ րէշէլ (syrup of ginger) վերջինը թանձր խմորելու շափ բաւական խառնէ: Ի հարկին կաղինի (nut) մեծութիւնով կտոր մը ուտելու է վերի բազագրութենէն, աղիքը բնական վիճակի մէջ պահելու համար:

18. ԾՈՎԱԽՈՑԻ ԴԱՐՄԱՆ — Վայրի կեռասի կեղեւը աղէկ մը խարշէ (wild-cherry bark), նախաճաշի թէյի թեթեւութեամբ և գինիի բաժակ մը լցուն ամէն ճաշէ առաջ խմէ երեք օր դեռ նաւ չի նստած: Վերջին օրը թեթեւ լուծողական մը առ:

19. ԾԽԱՄՈԼՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆ — Փոշիցած իփիքէք (ippecac) 4 կրէյն, թարթար էմէթիք 20 կրէյն, կաթի շաքար 3 տրամ:

Խառնելէ ետք 20 հաւասար մասերու բաժնէ: Իւրաքանչիւր ճաշէն ետք թէյի, սուրճի կամ կաթի մէջ մէկ մաս խառնելով խմէ:

20. ԶԱՅՆԼ ԶԱՐԳԱՑՆԵԼ — ՄԵՂՐԱՄՈՒ 2 տրամ պալսըմ գօփէյպէ (balsam of copaiba) 3 կաթիլ, փոշիցած լիքըրայս (licorice — միան քէօքի) 4 տրամ՝ Հալեցուր մեղրամոմը եւ պալսըմը կաւէ ամանի մը մէջ: Յետոյ կրակէն վերցուր եւ միան քէօքիի փոշիին մէջ խառնէ, եւ 3 կրէյն հաղեր պատրաստէ: Օրը երեք անգամ երկու հատ առ այս հաղեն, ու քիչ ատենէն ձայնդ կը զօրանայ:

21. ՕԶԻ ԹՈՒՆԱՀՈՐՈՒՄ — ԿՄԱՆԱՏԻ ԻՎՂԸ (turpentine) լաւագոյն դարմանն է կ'ըսուի: Շիշի մը մէջ դիր զայն շիշին բերանը ճիշտ խայթուած տեղը դիր եւ թողոր իւղը ճիշտ վէրքին վրայ հոսի:

Սովորապէս 15 վայրկեանէն կատարեալ հանգստութիւն մը պիտի գայ հիւանդին վրայ:

22. ԱԶՔԻ ԶՈՒՄ — ՊԱՂԵՂ (alum) 8 (gr.) կրէյն, վարդեղուր 8 առւնս: Առաւօտ եւ երեկոյ աչքիդ կաթեցուր:

23. ԵՐԵՍԻ ԿԱՄ ԶԵՌՔԵՐՈՒ ՃԱԹՌՑԵԼՈՒ ԴԵՂ — ՊէՆԳՈՒՆ (Tr. Benzoin) 10 մի-

նիմ (minim) Spt. Vini. rect. 2 տրամ (dram)
ջրախառն բազա (aqua Rasaæ) 3 մինիմ կլի-
սէրին 1 առւնս:

Ճաթուտած մարմինին վրայ քսէ գիշերը,
նախապէս տաքջուրով եւ օճառով լուալ եւ
չորցնելէ յետոյ: Մէկ անգամէ աւելի գոր-
ծածելու շատ քիչ անգամ հարկ կը մնայ:
Այս բաղադրութիւնը կը գործածուի նաեւ
շրթունքներու համար:

24. ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԵՍԻ ՓՈՇԻ —
Վիէննական կաւիճ (Venice calc) ձերմակ 2
մաս. բրինձի փոշի (Rice flour) 2 մաս. զինկ
օքսայտ (zinc oxide) 1 մաս:

25. ԵՐԵՍԻ ՆԵՐԿ — Կարմիր ներկ կը
պատրաստուի հետեւեալ կերպով. առ՝ ալ-
քօհոլ (Alcohol) 4 առւնս, ջուր 2 առւնս,
Քարմին (Carmina) 20 կրէյն, Ամոնիա (Am-
onia) 6 կրէյն, oxalic acid 6 կրէյն, Պաղեղ (Alum) 6 կրէյն:

Բոլորը միասին լաւ մը խառնէ:

26. ՊԵԽԵԲԸԼ ԲՈՒԽՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ —
Ոչխարի ճարպ (Mutton tallow) 300 մաս,
Զիթաթւղ 200 մաս, սպիտակ մոմ (white
wax) 25 մաս, Սփըրմաչէթի (Spermaceti) 15
մաս, մաքուր սոսինձ (resin) 12 մաս,
Թինքչըր ավ Քէնթէրիտէս (Tincture of Can-

tharides) 30 մաս: Հալեցուր առաջին հինգ
տարրերը ջուրի ամանի մը մէջ. եւ երր
որդի քէնթէրիտէսը աւելցուր վրան, աղէկ
մը խառնելով: Մի քանի կաթիլ վարդի իւղ
կրնայ աւելցուիլ անուշահստութիւն մը տա-
լու համար: Յաճախակի ածիլէ և օծանելիք
փըմէյտ (pomade) քսէ վրան:

27. ՄԱԶ ՆԵՐԿԵԼՈՒ ԵՂԱՆԱԿ — Նախ
մազը լաւ մը լրւա օճառի ջուրով: Յետոյ
պարզ ջուրով: Զորցուր եւ վրան քսէ մա-
քուր վրձինով, Գաղիական թթու (Gallic Acid Solution) երբ լրան մը չորնայ, մոքըր
աստմիերով սանտր մը առ, եւ նուրբ վըր-
ձինով մը սանտրին աստմիերուն վրայ դիր
քիչ մը արծաթի լուծում (silver solution)
եւ մազերը սանտրէ, մինչեւ որ փայլուն սեւ
գոյն մը ստանայ: Քանի մը ժամ սպասելէ
վերջ դլուխը դարձեալ լուալու է մաքուր
ջուրով: Եթէ թուխ գոյն ներկել կուզես,
արծաթին բաղադրութեան (silver solution)
վրայ 1-2 անգամը ջուր աւելցուր:

28. ՄԱԶԸ ԱՃԵՑՆԵԼ Եւ ԵՐԿՆՅԵԼ —
Մազերու աճումը աւելցնելու համար գոր-
ծածէ շարաթը մէկ անգամ հետեւեալ
ջուրը: 1 քօրթ (quart) եռացած ջուր, 1
առւնս փոշիացեալ (Pulverised Borax) պօ-
րաքս, եւ կէս առւնս փոշի Քափուր (Cam-



phor), յետոյ սպունգով կամ ֆանելիայի կոռիով շփէ:

29. ՄԱԶԵՐԼ ՃԵՐՄԿԵԼԻ ԴԱԴՐԵՑՆԵԼ —
Կապարի շաքար (Sugar of lead) 1 առւնս, լաք ՌԵՓԵՐ (Lac sulphur) 1 առւնս, Պէրկամո ողի (Essence of Bergamot) 1 առւնս, ալքոհոլ (alcohol) 1 կիլ (gill), կլիսէրին (Glycerine) 6 առւնս, Թինքըր քանթարիտ (Tincture cantharide) 1 առւնս, Ամոնիա (Ammonia) 1 առւնս (oz.).

Վերի նիւթերը բոլորը մէկ քօրթ (quart) պարզ ջուրի մէջ բաղադրէ:

Մազերը մաքուր պահելու է, և օրական 1-2 անգամ վերի բաղադրութիւնը գործածելու է, մազերը թրջելով, զօրաւոր կերպով շփելու է:

30. ԵՐԵՍԻՆ ՎՐԱՅՑ ԲՈՒԽՆՈՂ ՄԱԶԵՐԼ ԹԱՓԵԼ — (Barium Sulphate) Պէրիլմ Սըլֆէյթ 1 տրամ, (fresh burned Lime) այրած թարմ կիր 1 տրամ, (Rice starch) բրինձի օսլայ 2 տրամ (drams): Լաւ մը իրար խառնէ գուլոնիայի ջուրով (cologne water) և խմորէ. որու մէջ 1 հարիւրերորդ կլիսէրին (glycerin) լուծուած ըլլայ: Մարմինի հարկ եղած մասին վրայ քսէ փոքր մաս մը, և թող մինչեւ որ ցաւիլ սկսի, յետոյ զմելիի մը կոնակով քերէ: Բաղադրութիւնը երբ չես գործածեր, ահը գոյց պահէ:

Մազ թափելու ուրիշ եղանակ մըն ալ կայ, փոշիացած փամիս քարով (powdered pumice stone) շփելու է մարմինը, որմէ վերջ (ammonia water) լուալու է:

31. ՄԱԶԵՐԼ ԹԱՓԵԼԻ ԴԱԴՐԵՑՆԵԼ —
Սըլֆէյթ քինին (sulphate of quinine) 1 առւնս, Թինքըր գրամէրիա (Tincture Kerameria) 2 առւնս, Թինքըր գանթարիտ (Tincture Cantharides) 1 առւնս, լաւանարի ողի (Spirit of Lavander) 5 առւնս, կլիսէրին (glicerine) 6 առւնս, Ալքոհոլ (Alcohol) 50 առւնս:

Բոլորը իրար խառնէ եւ թող որ մէկ երկու շաբաթ հանգչի, մնացորդը քամէ: Պէտք է մազերը վերոյիշեալ բաղադրութիւնով թրջել եւ 10 վայրկեան լաւ մը շփել, օրը երկու անգամ առաւօտ և երեկոյ:

32. ՄԱԶԸ ՍԵԽԻ ՆԵՐԿԵԼ — Նայթրէյթ արծաթի (silver nitrate) 3 տրամ, մզուած ջուր (Distilled) 4 առւնս: Մազդ օճառով և ջուրով լուա մէջն քիչ մըն ալ ամոնեա խառնած ըլլալով: Յետոյ չորցուր, եւ ջուրին քանակութեան մէկ քառորդին չափ ներկով թրջէ: Մի քանի րոպէ ետք ներկը ակռայի խոզանակով պէտք է կատարելապէս մազին քսել ուշադրութեամբ: Փայլուն սև գոյն մը յառաջ կուգայ:

**33. ՄԱԶԼ ԹԻՍԱԳՈՅՆ ՆԵՐԿԵԼ — ՓԱՋՐՈ-
ԿԱԼԻՔ ԲՇԹՈՒ (pyrogallic acid) 4 էս առւնս, տաք
մղուած ջուր 2 և 1 քառորդ առւնս: Լուծէ և
երր պաղի կամաց կամաց 1 առւնս մաքուր ալ-
քօհու դիր: Մազլ նախ պէտք է լուալ, եւ
յետոյ մազի արմատին պէտք է քսել հե-
ղուկը:**

**34. ՃԵՆԱՊԱԿԻԻ ԿՊՉՈՒԽՆ ԽՄՈՐ — Այս-
ինկ ապակի (Ising Glass) 1 առւնս, Մասթիչ
(Mastich in powder) 4 սքրըֆըլ, (Scrapes).
ջուր 2 առւնս, Ասէթիք ԲՇԹՈՒ (Glacial Acetic
Acid) 4 առւնս: Այսինկ ապակին ջուրը սու-
դէ, երբ լաւ մը յագենայ, նախ Ասէթիչ
ԲՇԹՈՒՆ Մասթիչին հետ բաղադրելէ վերջ ա-
սոր վրայ աւելցուր: Մեղմօրէն տաքցուր,
մինչեւ յստակ հեղուկ մը գոյանայ:**

**35. ԼՈՒԱԳՈՅՆ ՕՃԱՌ (3 ՏԵՍԱԿ) —
0հարիւր փառւնտ օճառ մէկ տոլար
ծախքով պատրաստելու համար առ, փօթաս
(potash) 6 փառւնտ (lbs.), ճարպ (lard) 4 փա-
ռւնտ, փոշիացած ռէտին (չամ սագըզ Resin)
4 առւնս: Ամէնը միասին խառնէ, եւ մէկդի
թող 4-5 օր, յետոյ ամբողջը մէկ 10 կէլըն
տաք ջուր պարունակող տակառի մը մէջ
լեցուր 10 օր. երկու անգամ օրական լաւ մը
խառնէ, որով կ'ունենաս 100 փառւնտ ընտիր
օճառ:**

**0հար 2. Մոմի իւղ (Tallow) 235 փառւնտ,
գոգօնըթի իւղ (cocoanut oil) 25 փառւնտ,
սիլիկօն սօտա (silicate soda) 100 փառւնտ,
մոխրաջուր (lye) 35 աստիճան տաք (Baum)
140 փառւնտ, մոխրաջուր (pearl ash lye) 25
փառւնտ, սասաֆէրա իւղ (oil of sassafras)
1 փառւնտ:**

**Ճարպը և իւղը տաքցուր 120 աստիճան
ֆարինայթ, հալեցուր եւ սիլիքէթ սօտան
աւելցուր, աստիճանաբար միեւնոյն ամեն
տաքցնելով և փայտով խառնէ մինչեւ որ օճառի
վիճակ ստանայ:**

**0հար 3. Թանձր օճառ (curd soap) 4 մաս,
գարպօնաթ սօտա (sodium carbonate) 3 մաս,
սիլիքա սօտա (sodium silicate) 2 մաս:**

Վերի եղանակով բաղադրէ:

**36. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՈՍԿԻ — Այս մետաղի
նոր խառնուրդ մըն է, որ այժմ մեծ քանակու
թիւնով կը գործածուի Ֆրանսայի մէջ ուկիի
տեղ: Առ, զուտ պղինձ (copper) 100 մաս, զինկ
կամ անագ (tin) 17 մաս, մակնէզիա (mag-
nesia) 6 մաս, (sal-ammoniac) Սալամոնիա երեք
վեցերորդ մաս, մարած կիր (quick lime) մէկ
ութերորդ մաս, թարթար (Tartar of com-
merce) 9 մաս: Հետեւեալ կերպով բաղադրէ.
նախ պղինձը հալեցուր, յետոյ առանձին ա-
ռանձին վրան աւելցուր աստիճանաբար, փո-**

շիացած, Մակնէզիան, Սոլ Ամոնիան, կիրը
եւ թարթարը: Այս ամբողջը լաւ մը խառնէ
իբր կէս ժամ, մինչեւ որ կատարեալ մը
խառնուին եւ միանան, յետոյ զինկը աւել-
ցուր, շատ փոքր քանակութեամբ խառնուր-
դին մակերեսը թափելով, եւ մի անգամ ալ
խառնէ, մինչեւ որ կատարեալ մը հալի այս
վերջինը, յետոյ հալոցին (կճիճ—crucible) վրան
ծածկէ, և խառնուրդը հալսծ վիճակի մէջ
պահէ 35 վայրկեան: Եթոյց մակերեսի հա-
ւաքուած փրփուրը զատէ, եւ մնացորդ հե-
ղուկը կաղապարէ: Այսպէս կունենաս նուրբ
մասնիկներով, կռանելի (malleable) և սքան-
չելի փայլ ընդունող, խառնուրդ մը՝ Դիւրաւ
չի մաշիր, և շատ մը նպաստակներու համար
ոսկիի տեղ կը բռնէ: Եթէ աղօտանայ կարե-
լի է փայլը վերստին ստանալ քիչ մը ջըրա-
խառն թթուով (acidulated water) լրւա-
նալով: Եթէ զինկի տեղ անագ (tin) գործած-
ուի, խառնուրդը աւելի փայլուն կ'ըլլայ:
Այս ֆրանսայի մէջ խիստ շատ կը գործած-
ուի եւ ամեն տեղ վերջերս հաւասար ըն-
դունելութիւն գտած է:

37. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԱՐԾԱԹ ՊԱՏՐԱՍԵԼ
— Առ մէկ չորրորդ առւնս պղինձ, 1 առւնս
Պլամբ-հ (Bismuth), 2 առւնս պարզ աղ, 1
առւնս արսէնիք, 1 առւնս փօթաս, 1 առւնս
արսոր, եւ 3 առւնս մաքուր արծաթ: Ամեն-

քը հալեցուր ամանի մը մէջ եւ կոտորե-
լապէս խառնէ:

38. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՄԵՂԻՐ — Արհեստա-
կան մեղր պատրաստելու համար շատ տե-
սակ Փօրմիւլաներ կան: Հետեւեալը լաւա-
գոյն տեսակներէն է:

Շաքար 10 մաս, Անձրեւի ջուր 3 մաս,
թեթեւ ջերմութեան վրայ եռացուր և թող
որ եռայ 15 վայրկեան և երեսի հաւաքուած
փրփուրը վերցուր: Թող որ պաղի: Վրան
աւելցուր 3 մաս լաւագոյն տեսակ քամուած
հին մեղր եւ առաջ եկած բաղադրութեան
ամէն մէկ կէլընին համար 5 կաթիլ անա-
նուիսի ողի (peppermint): Ամենէն լսւ ար-
հեստական մեղր կը շինուի, գունդ շաքարով
(loaf sugar): Եթէ այս գործածուի, իրական
մեղրէն զանազանելը անկարելի է: Եթէ հա-
սարակ թուխ (brown sugar) շաքար գործած-
ուի, հարկ է խառնուրդը քիչ մը աւելի եր-
կար ատեն եռացնել և զգուշութիւնով սէրը
(երեսը հաւաքուած) եւ փրփուրը առնել:
Իւրաքանչիւր մէկ կէլըն բաղադրութեան
վրայ 20 կրէյն (grains) Քրիմ թարթարի
(Cream Tartar) յաւելումը, արհեստական
մեղրը աւելի արժէքաւոր կ'ընծայէ:

39. ԿՈՇԻԿԻ ՍԵՒ ՆԵՐԿ — (Bees Wax)
Մեղրամոմ 1 փառնատ, սէրէզին (ceresin) 1

փառւնտ, (Carnauba wax) 6 առւնս, կտաւատի
իւղ (Turpentine) 3 (pints) փայնթ, դեղին
օձառ (yellow soap) 6 առւնս, իւղին մէջ լու-
ծանելի սեւ անելին ներկ (oil soluble Black
aniline):

Նախ օճառը մանրէ, եւ կարելի եղածին
չափ քիչ քանակութիւնով ջուրի մէջ հայեց-
ուր ջերմութեամբ, մոմերն ալ միասին
զատ ամանի մը մէջ հալեցուր, յետոյ աւել-
ցուր վրան կտաւատի իւղը եւ լաւ մը
խառնէ. ապա աւելցուր Անելին ներկը եւ
ասոնք խառնէ օճառի բաղադրութեան մէջ
եւ շարունակ խառնէ մինչեւ որ պաղի: Որ-
քան առատ կտաւատի իւղ գործածուի,
այնքան աւելի կը պահուի ներկը:

Բ. ԵՂԱՆԱԿ

Օզօքըրիթ (Ozokerite) 5 ու կէս առւնս,
դեղին սէրէսին (Ceresin yellow) 2 փառւնտ,
գարնօպա մոմ (Carnauba wax) 5 ու կէս առւնս
մեղրամոմ (Bees wax) 11 տրամ (drams),
կտաւատի իւղ (Oil of turpentine) 4 փայնթ
(pints), սեւ ներկի փոշի (Lamp Black) 2
փառւնտ, իւղի մէջ լուծելի Անելին ներկ
(Oil-Soluble black ane line) 1 տրամ (dram):

Առաջին չորսը իրար խառնելով հալեցուր,
յետոյ վրան աւելցուր կտաւատի իւղը եւ լաւ
մը խառնէ, յետոյ լաւ մը միացուր խառնուր-
դը վերջին երկուքով գոյն տալու համար:

40. ԶԳԵՍՏԻ ՎՐԱՑԷԼՆ ՓԱՅԼԸ ՀԱՆԵԼ
— Փայլը՝ ուսերու եւ կոնակի վրայէն, կա-
րելի է վերցնել, թեթեւ կերպով յշկալա-
թով (emery cloth) շիբլով. այն չափ չփէ որ
միայն երեսի մազը քիչ մը առնես: Քաշմիր
(Cashmere) կամ ուրիշ հարթ նիւթերու համար
վրայէն տաք մետաքս թաշկինակով չփէ:

41. ՀԱԻԿԻԹ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ՊԱՀԵԼ
— Խառնէ մէկ պուշըլ մարած կիր (quick
lime) 32 առւնս աղի եւ 8 առւնս թար-
թարի հետ. դիր այնչափ ջուր որ հաւկիթը
կարենայ ջուրին մակերեսը լողալ: Հաւկիթ-
ները տակառի մը մէջ դիր եւ այս խառ-
նուրդով ծածկէ:

42. ՀԱԻԿԻԹ ՊԱՀԵԼ ԵՐԿԱՐ ԱՏԵՆ —
Տակառ մը առ, մէկ դոյլ (pail) ջուրի վրայ
լեցուր 2 փայնթ (pints) թարմ մարած կիր
(slacked lime) եւ 1 փայնթ հասարակ աղ
լուծելի վերջ, այս լուծումէն տակառին
մինչեւ կէսը լեցուր. հաւկիթը ասոր մէջ
դիր, Յունիս ամիսէն վերջ, ուր կրնայ պահ-
ուիլ մինչեւ երկու տարի առանց վնասուելու,
Այս խիստ վստահելի եղանակն է:

ՀԱՅԵԼԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ
43. ԱՐՄԱԹԱԳՈՐԾՈՒՄ ՀԱՅԵԼԻԻ — ԱՄէՆ
քաղաքի մէջ, սքանչելի պատեհութիւն կայ

ուշիմ երիտասարդի համար, սկսելու շահաւոր գործ մը, արծաթազօծելով հայելիներ, գործը ըլլալով դիւրին եւ շահը շատ: Այս արհեստը տարիներէ իվեր իրը անգին գաղտնիք պահուած էր, սակայն հոս դրուած ֆօրմիւլային եղանակը կարելի կ'ընէ ուէ մէկին համար, համբերատար եւ ուշադիր, գործը յաջողութեամբ կատարել: Պիտի զարմանաս թէ որքան մեծ քանակութիւնով այս կարգի գործ կ'ըլլայ ամէն քաղաքի մէջ: Կահ կարսեաց վաճառականներ ուրախութիւնով քեզի գործ կուտան, որով պիտի խնայուած ըլլան, ժամանակ, փոխադրութեան ծախք, եւ կոտրելու հաւանականութիւն: 13X36 չափով հայելի մը կը ծախուի \$4.00 և աւելի, շրջանակին համեմատ: Այդ չափով ապակի մը կրնաս արծաթազօծել երկ խաւ (coat), 20 սէնթէ պակաս ծախքով: Ամենէն լաւ եւ պարզ եղանակը հետեւեալն է:

Նախ առ 80 կրէյն (grain) բորակածնի արծաթ (either Lunor caustic or crystalized salt) եւ լուծէ տասը առւնս ջուրի մէջ, նախընտրելի է թորեալ կամ անձրեւի ջուրը: Ասոր վրան աւելցուր 2 առւնս ալքօհոլ, եւ 2 առւնս աւշակ (aqua ammonia) աւշակը հեղուկին վրայ աւելցուր կաթիլ կաթիլ մինչեւ որ նախապէս կազմուած (precipitate) պըտորութիւնը լուծուի եւ յստակնայ հեղուկը.

ապա թող 3-4 ժամ որ պայծառանայ եւ պատրաստ ըլլայ գործածութեան համար — թիի 1:

Եետոյ առ 6 առւնս (oz.) ջուր, եւ լուծէ մէջը 24 կրէյն արծաթի բորակ, եւ վրան աւելցուր 30 կրէյն պղինձի կամ թարթարի արսէնայթ (arsenite or tartrate of copper) եւ յետոյ աւելցուր: Կաթիլ կաթիլ բաւականաչափ աւշակ (ammonia), կանխաւ յառաջ եկած արծաթի օքսիտը (precipitate of oxide of silver) մինչև լուծուի арсенիտ կամ tartrate of copperի հետ, որմէ վերջ աւելցուր 2 առւնս ալքօհոլ:

Եետոյ պատրաստէ առանձինն լուծում մը, որ բաղկանայ, 48 կրէյն փոթասա (potassa), 16 առւնս ջուրի մէջ: Այս վերջի յիշուած լուծումը պէտք է եռացման աստիճանին հասցնել չողիի վրայ տաքցնելով, յորմէ հետէ պէտք է կաթիլ կաթիլ աւելցնել արծաթի բորակածնի լուծումը (nitrate of silver solution) եւ арсенիտ կամ tartrate of copper, փոթասա (potassa) լուծումին վրայ, և եռացումը շարունակել մէկ ժամի չափ, կամ այնչափ մինչեւ որ երեսը ճերմակ մազկ մը (film) հաւաքուի, որմէ ետք պէտք է թողուր որ պաղի: Երբ որ պաղի, թորէ (filter) որով գործածութեան համար պատրաստ կ'ըլլայ եւ կը կազմէ թիի 2 բաղադրութիւնը:

Արծաթազօծելիք ապակին կատարեալ հորիզոնական դիրքի մէջ դիր, հաստատուն սեղանի մը վրայ: Մետաղը ապակիին վրայ զօծելու համար, բաւականաչափ թորեալ ջուր առ, եւ վրան աւելցուր հաւասար քանակութիւնով թիի 1 և 2 բաղադրութենէն եւ ամբողջը լաւ մը իրար խառնէ, եւ այս հեղուկը տարածէ զօծելիք ապակիին վրայ: Զօծումը անմիջապէս կըսկի ինքնին, թողոր շարունակուի տասը վայրկեանի չափ, մինչեւ հեղուկի մէջ գըտնուած մետաղը սպառի եւ ապակին մետաղի խառնուրդը վրան առնէ, եւ փայլուն ցուլացուցիչ երես մը ստանայ ապակիին կողմը:

Արծաթազօծումը աւելի դիմացկուն ընելու համար, աւելի նախընտրելի է առաջին զօծման վրայ երկրորդ խաւ մը տալ: Որը առաջին գործողութեան կրկնումն է, առաջինը չորսնալէ առաջ: Արծաթազօծումը լրանալէ յետոյ, ամբողջ մակերեսը կրնաս ծածկել, asphaltine ջնարակով: Թէպէտեւ այս անհրաժեշտ չէ:

Գործողութեան յաջողութիւնը կախում ունի, մեծապէս, արծաթազօծելիք ապակիին մակերեսին մաքրութենէն. բիծ մը կամ փոշի հետք մը, անպայման արատ կը թողու: Ապակին մաքրելու լաւագոյն եղանակ մըն է, մակերեսը սօտայի (soda) տաք

լուծումով լուալը, յետոյ ջրախառն ոitric acid եւ ապա ալքօհոլով եւ զգոյշ ըլլալ մատ չի զարնել ապակիին արծաթազօծելի երեսը:

44. ՀԱՅԵԼԻՆԵՐ (ինչպէս պատրաստել) — Լուծէ մէկ եւ երեք չորրորդ առևնս արծաթի նայթրէյթ (nitrate of silver) 4 առևնս մաքուր ջուրի մէջ, աւելցուր ատոր վրայ 1 առևնս հեղուկ ամօնիա (ammonia). Կաթիլ կաթիլ մինչեւ որ գորչ դիրս մը (precipitate) կազմուի, յետոյ աւելցուր քիչ մը ամօնիա եւս, մինչեւ որ ամբողջ խառնուրդը ունենայ քիչ մը գորչ դիրս (precipitate), յետոյ քամէ: Այսպէս կը պատրաստուի Ա. հեղանիւթը:

Յետոյ լուծէ 1. մէկ չորրորդ առևնս րօշէի աղ (Rochelle salt) 3 առևնս մաքուր ջուրի մէջ եւ քամէ: Այսպէս կը պատրաստուի Բ. հեղանիւթը: Գործածելու ատեն, խառնէ Ա. եւ Բ. հեղանիւթերը 12 առևնս մաքուր ջուրի մէջ, ոչ շատ խոր ամանի մը մէջ վազեցուր այս խառնուրդը, եւ կատարելապէս մաքուր հայելապակին (plate glass) դիր այս հեղուկին մէջ երեսին վրայ: Թողոր ապակին հոն մնայ 30 րոպէի չափ, յետոյ վերցուր եւ ապակիին ետեւը որ արծաթազօծուած է, սերկէ, արգիլելու համար ածխացումէ (oxidation):

45. ՔԱՌԻՉՈՒԻԷ ԿՆԻՔ (Rubber Stamp) —

Ուզուած անունը գրաշարի մը շարել տուր, իւղով օծէ շարուած անունը եւ զայն կէս մատնաչափ բարձր պահպանակով մը շըր-ջապատէ: Յետոյ Փարիզեան դաճով (Plaster of Paris) աղէկ մը խառնշտկէ, եւ շարուած անունը ատոր մէջ սուրդէ: Յետոյ ծծմբաւորուած (Vulcanized) քառչչուէն կնիքի մը մեծութեամբ կտրէ, եւ Փարիզեան դաճը վերցուր դրերուն վրայէն: Ապա դիր թէ ձուլուած Փարիզեան դաճը եւ թէ քառչուն մամուլի մը տակ, քառչուն տաքցնելով կակուցնելէ յետոյ: Յետոյ ձնչէ մամուլին տակ, եւ թող այդպէս մնայ մինչեւ որ ձուլածոն պաղի:

Գործածելու համար այս քառչուն տախտակէ կոթի մը վրայ փակցուր կամ հաստատէ:

46. ՅԱՐԴԻ ԳԼԽԱԲԿՆԵՐ ՄԱՔՐԵԼ — Թաց գորնմիլի (damp Cornmeal) մէջ քիչ մը ալ դիր: Ատով աղէկ մը շփէ գլխարկը եւ այդպէս թող գիշեր մը մնայ: Յետոյ փոշին խոզանակէ եւ գլխարկը Փըրօքղայտ Հայտրօճէնով (Hydrogen Oxide) լուա եւ չորցուր:

47. ՅԱՐԴԻ ԳԼԽԱԲԿ ՃԵՐՄԿՑՆԵԼ — Սոտիը Պայսլֆայթ (Sodium Bisulphite) 10 տրամ, թարթարիկ թթու (Tartaric acid) 2

տրամ, պորաքս (Borax) 10 տրամ, իրարխառնէ: ջուրի մէջ խառնէ կէս գաւաթ՝ եւ գործածուած ակռայի վրձինով քսէ գլխարկին վրայ, զօրաւոր կերպով եւ յետոյ պարզ ջուրով լուայ:

48. ՃԱՆՃԻ ԹՈՒՂԹ — Գոլորչացող (Փիւմիկէյթին) փոշիացած կուասենեի կեղեւ (quassia) 4 առւնս, փոշիացած գլօրէյթ փօթէշ (Chlorate of potash) 1 ու կէս առւնս (oz.), փէննիրօյըլի իւղ (Pennyroyal oil) երեք չորրորդ առւնս: Լաւ կերպով խառնէ երեք չորրորդ փայնթ (pint) ջուրի մէջ: Ծծուն թուղթի թերթիկները թրջէ այս հեղուկին մէջ, յաճախակի խառնելով, յետոյ թրջուած թերթիկները չորցուր մեղմ ջերմութեան մէջ: Այսպէս պատրաստուած թերթիկ մը սենեակի մը մէջ վառելով կրնաս մաքրել սենեակը ճանճերէն:

Երեք թերթիկը 5 սէնթի փոքրաքանակ վաճառողներու մօտ կը ծախուի:

49. ՀԵՂՈՒԿ ՍՈՍԻՆՉ (Փունիտ) — Անգերազանցելի տեսակէն սոսինձ մը կրնայ պատրաստուիլ քանի մը ժամ եռացնելով 10 մաս լաւագոյն սոսինձ եւ 26 մաս ջուր, եւ 1 ու կէս մաս նայթրեք թթու (nitric acid): Երկու առւնսի շիշ մը 10 սէնթի կը ծախուի:

50. ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ԱՐԾԱԹԱԶՕՇՈՒՄԻ
ՀԵՂՈՒԿ ԲԱՂԱԴՐԵԼ — Միասին դիր շեշի
մը մէջ, 1 առւնս լաւ արծաթ, շերտ շերտ
մանրած, 2 առւնս լաւագոյն բորակային
թթու (nitric acid) եւ կէս առւնս թորեալ
կամ անձրեւի մաքուր ջուր: Եթէ լուծումը
չսկսի անմիջապէս, քիչ մըն ալ ջուր աւել-
ցուր եւ շարունակէ աւելցնել մինչեւ որ
սկսի երբ կատարելապէս լուծուի եւ մաս
մը անլոյծ արծաթ մնայ լուծումը կրնաս
առաջ տանիլ դարձեալ քիչ մը եւս ջուր
աւելցնելով: Երբ բաղադրութիւնը կատա-
րելապէս կը պատրաստուի, վրան աւելցուր
1 քօրթ (quart) անձրեւի տաք ջուր եւ մէկ
ապուրի դգալ հասարակ աղ: Լաւ մը ցնցէ,
եւ յետոյ թող որ հանգչի: Մնացորդին վրայ
աւելցուր այնչափ ջուր մինչեւ որ բաղադ-
րութեան թթու համը անզգալի դառնայ:
Յետոյ այս բաղադրութեան ամէն մէկ առւն-
սին վրայ աւելցուր 1 առւնս Սիանար Փօթաս
(Cyanuaret Potassa) (Պայնէ) և մէկ քօրթ (quart)
դուտ անձրեւի ջուր, 24 ժամ սպասելէ վերջ
գործածութեան պատրաստ կ'ըլլայ:

